

ՄԱՍԿ

Տարեկան գինը 7 րուբլ, կես տարվանը 4 րուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Մատուրեանի և

Արամյանների խանութում

Ստամբուլում գրվում են ուղղակի

Тифлис. Редакция „Маск“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2

(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են

խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի և Երևանի մասնաժողովը. — Ներքին առևտուրը լինում է: Պատերազմական բեմից: Կաթն-նալին տնտեսութեան մասին: Նամակ խաղի-վիդ: Նամակ խաղի: Նամակ Կոնստանդնուպոլիս: Նամակ խաղի: Ներքին լուրեր: — Արտաքին լուրեր: — Յայտարարութիւններ: — Տեղեկացոյց: — Բա-նասիրական: Մատենագրութիւն:

ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍ-ՆԱԺՈՂՈՎԸ

Անտեղի է շատ, երբ մարդիկ ընդհանուր գործի մէջ անձնական հաշիւները և ինքնասիրութեան զգացմունքը բարձր են դասում նոյն իսկ գործից:

Կորեբուն մի և նոյն բարի նպատակով, Թիֆլիսից փախած հայ գաղթականներին օգնելու հա-մար, հիմնվեցան Անդրկովկասի եր-կու քաղաքներում՝ Թիֆլիսում և Երևանում մասնաժողովներ: Մինչև որ Թիֆլիսի մասնաժո-ղովը դեռ հիմնված չէր, — շատերը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՍՆԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Der Kaukasus und seine Bedeutung für Russland» — von Orest Ritter von Bischoff, K. K. Oesterr. Major im Infanterie-Regim. Nr. 34. — Leipzig Oswald Mutze, 1877. — «Կովկասը և նրա նշանակութիւնը Ռուսաստանի համար» — Հեղի-նակութիւն աւստրիացի մայոր Օրէստ Բիշօֆի — Լայպցիգ. 1877.

Այն թիշամական զգացմունքը, որ վաղուց է նկատվում էր Եւրոպայի զանազան չլմաններում Ռուսաստանի դէմ, այժմ երբ Ռուսաստանը Թիֆլիսից պատերազմ է յայտնել, հանելով իր սուրբ քրիստոնեաների ազատութեան հա-մար, — այդ թիշամական զգացմունքը աւելի էլ սաստկացաւ Եւրոպայում: Մամուլի թիֆլիսե-րգաններ, եւրոպական ամեն լեզուներով բրո-շուրներ, գրքեր, ամսագրական և ուսումնական բազմաթիւ յօդուածներ ուղղված են Ռուսաս-տանի դէմ: Ռուսաստանին վերաբերութեամբ այդ կատաղի թիշամական զգացմունքի զար-գացնելուն քիչ չեն նպաստել Եւրոպայի զա-նազան չլմաններում՝ ունեւարացիները, — Ռու-սաստանի այդ դար և որ թիշամները, ինչպէս իրանք իրանց են անուանում, եւրոպական մա-մուլի գրեթէ ամեն խմբագրութեան մէջ աշ-խատող և մեծ նշանակութիւն ունեցող հրէա-ները, և վերջապէս լեհացիները, որոնք հրէաների օրինակին հետեւելով, վերջին ժամանակ իրանց ձեռքը գցեցին բազմաթիւ ֆրանսիական, գեր-մանական, իտալական և անգլիական լրագիր-ներ:

Ռուսաստանի դէմ ուղղված այդ թիշամական զգացմունքը արտայայտող բրոշուրներից մինը կարող է համարվել և վերե յիշված վերնագրով գերմաներէն բրոշուրը:

Պ. Բիշօֆ, աւստրիական զօրքի մայոր լինե-լով, որպէս զինուորական և մանաւանդ աւս-տրիական պատական զօրքի զինուորական, ան-կասկած լաւ ծանօթ է զինուորական հարցերի

ասում էին թէ Թիֆլիսում հար-կաւոր է հիմնել մի մասնաժողով, որ լինի կենտրոնական և մշտա-կան: Բայց հէնց որ Թիֆլիսի մասնաժողովը հիմնվեցաւ և նրան կազմող անդամներ արդէն ընտր-վեցան, — նոյն մարդիկ որոնք առաջ ասում էին թէ Թիֆլիսի մասնա-ժողովը պէտք է կենտրոնական լինի, երեւի չը հաւանելով մասնա-ժողովը կազմող անձինքներին, փո-խեցին իսկոյն իրանց դատողու-թեան եղանակը և սկսեցին ապա-ցուցանել որ Թիֆլիսում մի մաս-նաժողով ունենալը ոչինչ միտք չունի, այլ Երևանի մասնաժողովը պէտք է կենտրոնական լինի.... Այո, նոյն մարդիկ սկսեցին ապա-ցուցանել որ Թիֆլիսի մասնաժո-ղովը եթէ գոյութիւն էլ ունենայ, շատ շատ պէտք է մէկ տեսակ ազգէն տ լինի Երևանի մասնա-ժողովի, զրկված իր անձնական կամքից, իր ընտրողների և նուի-

հետ: Նա խօսում է իր զրկածի մէջ երկար ու բարակ ուսաց զօրքերի, զինուորական ճանա-պարհների, երկրի տարածութեան, աշխարհա-գրական դիրքի մասին, վերջապէս մանրամասն կերպով թէ փաստերով և թէ թեանաւանդով ներկայացնում է ընթերցողի առջև իր 40 երեսից բաղկացած բրոշուրի մէջ Ռուսաստանի, բայց մանաւանդ նորա մի մասի՝ Կովկասի և Անդրկով-կասի զինուորական ոյժերը, բրոշուրի զինու-րական մասնագիտական կողմը թողնելով այդ մասի մէջ աւելի հմուտ մարդիկներին քննե-լու, կուզենայինք մեր ընթերցողներին ներկա-յացնել այդ բրոշուրի զիսաւոր, առաջնորդող զաղախարը:

Այն թիշամական զգացմունքը Ռուսաստանի դէմ, որի մասին մենք յիշեցինք, Եւրոպական եր-կրների թուով ամենից սաստիկ կերպով յայ-տնվում է մանաւանդ Աւստրո-Ունգարիայում, և հասկանալի է ուրեմն ինչ զգացմունք թելադրած կը լինի մայոր Բիշօֆին, աւստրիացի զինու-րական, իր բրոշուրը գրելու:

Եւրոպացի ուսատեսացները խելազարվել են մի մտքի վրա, որ կարծես ուրուականի պէս հետեւում է նրանց գիշեր ցերեկ՝ այդ իբր թէ Ռուսաստանի վաղուցվազ ցանկութիւնը մի կող-մից կու տալ Բալկանեան թերակղզին, սեփա-կանացնելով իրան Կ. Պոլսի, իսկ միւս կողմից ձգտել դէպի Հնդկաստան:

Այդ միտքը, ասում ենք, սարսափեցնում է Եւրոպացի ուսատեսացներին, և հասկանալի է որ մի անգամ ընդունելով այդ տեսակ կարե-լութիւն, նրանք էլ չեն քննում թէ որքան ան-հիմն կարող է լինել այդ կարծիքը, այլ ամեն դատողութիւնների առջև խուլ ձեւանալով, կրկ-նում են թէ Ռուսաստանը սպառնում է ամ-բողջ Եւրոպային և այլն....

Ընդունելով մօլեւանդ ուսատեսացների ան-հիմն կարծիքը Ռուսաստանի աշխարհակա-լութիւնը վրա որպէս հնարաւոր, պարզ է որ Ռուսաց հակա կարող է երկրից գցել վախկոտ-ների սրտում: Բայց նոքա չեն հարցնում արդեօք ճշմարիտ են իրանց ունեցած կասկածները Ռու-սաստանի վրա, արդեօք զրգարութիւն չէ որ Ռուսաստանի ամբողջ պատմութեան մէջ նը-մարվում էր ձգտումն Կ. Պոլսի վերցնելու և

րատունների առջև ամեն տեսակ պատասխանատուութենից....

Այսպէս է միշտ մեր հայերի բանը՝ ամեն տեղ կիրք, անձնական կոյր հաշիւներ, անտեղի ինքնասի-րութիւն, որ ամեն նոր յայտնվող գործ, դեռ չը ծնված սպանում է:

Մեր կարծիքով երկու մասնա-ժողովներն էլ մի և նոյն բարի և օգտաւէտ նպատակներ ունեն, ու-րեմն երկուսն էլ պէտք է մի և նոյն իրաւունքներ ունենան, մի և նոյն պատասխանատուութիւնը կրեն նուիրատու հասարակութեան առջև: Մեր կարծիքով երկուսն էլ հաւասար են ոչ Թիֆլիսի մա-նաժողովը Երևանի մասնաժողո-վից բարձր է, ոչ էլ Երևանի մա-նաժողովը Թիֆլիսի մասնաժողո-վից բարձր է:

Ճշմարիտ է Երևանի մասնա-ժողովը գտնվում է մի կողմից աւելի աջող դրութեան մէջ, որով-հետեւ գտնվում է նոյն իսկ այն

սեփականացնելու, կամ Հնդկաստանի մի մաս տիրելու. — այդ բոլորը չեն հարցնում, իրանց նեղութիւն չեն տալիս հիմնաւոր կերպով քննել եւրոպական թիֆլիսեաները: Նոքա ընդունում են որպէս հաստատ իրանց հարած, իրանց հի-ւանդ ուղիղից ծնված մտքերը, և այդ տեսա-կէտից կուրացած, էլ չեն որոշում սեր սպիտա-կից: Ռուսաստանը յայտնում է պատերազմ Թիֆլիսում տանվող քրիստոնեաներին ազա-տելու համար, — իսկ նրանք իրանց ուրուակա-նից վախեցած, կրկնում են՝ թէ Ռուսաստանի նպատակը բոլորովին ուրիշ է, թէ Ռուսաստանը իր ամբողջ պատմութեան ընթացքով ապացու-ցել է որ ցանկութիւն ունի սեփականացնել Բալ-կանեան թերակղզին, թէ միշտ ձգտել է դէպի Կ. Պոլսի և այլն: Եւ այդ աղաղակները գցելուց յետոյ, սկսում են քննել, հետազօտել Ռուսաստանը՝ զինուորական, աշխարհագրական, սարատեղեկական, ազգագրական կողմից, և այլն, եղբայրացնում են իրանց քննութիւններից և դա-տողութիւններից որ Ռուսաստանը չափից դուրս մեծ և զօրեղ է, թէ նա սպառնալիք է ամբողջ Եւ-րոպայի, ամբողջ աշխարհի խաղաղ գոյութեանը, և ուրեմն պէտք է նրան փոքրացնել, խել նրա-նից մի քանի կողմեր և այլն և այլն....

Բոլորովին նման դատողութեանը հետեւում է և մեր հեղինակը: Իր առաջաբանի մէջ Ռուսաս-տանը պատմական կերպով քննելուց յետոյ, իսկ բուն զրկածի մէջ Ռուսաստանի վրա աշխար-հագրական, տեղագրական, բայց մանաւանդ ստրատեգիական, զինուորական աչքով նայե-լուց յետոյ, հասնում է այն եզրակացութեանը որ Ռուսաստանը է և կը լինի միշտ ամբողջ Եւ-րոպայի, ամբողջ աշխարհի խաղաղութեան հա-մար սպառնալիք, քանի որ այդ երկրի աշխար-հագրական դիրքի մէջ փոփոխութիւններ չը կա-տարվեն, Ռուսաստանի զինուորական իշխա-նութեան զիսաւոր ոյժը պ. Բիշօֆ տեսնում է զինուորական այդ պետութեան երկու սահմա-նագիծին երկրների մէջ՝ Լեհաստանի և Կով-կասեան երկրների մէջ: Ռուսաստանի այդ եր-կու մասերը կազմում են, հեղինակի կարծիքով, երկու զօրեղ հիմքեր, բազի սն եր, մշտական պատերազմական արշաւանքների համար, որոն-ցից առաջինը, Լեհաստանը ձեռքին ունելով,

նահանգի կենտրոնում, որտեղ զե-տեղված են գաղթականները, նա մօտ է նրանց, ուրեմն և աւելի հեշտ կերպով կարող է յանձն առնել կատարողական դերը: Բայց ուրիշ կողմից Թիֆլիսի մասնա-ժողովը մեծ քաղաքում, Կովկա-սեան մայրաքաղաքում գտնվելով, ոչ պակաս աջող դիրք է բռնում, միջոց ունելով աւելի լայն ասպա-րէզի մէջ գործելու, և ոչ թէ միայն Թիֆլիսում գումարներ հա-ւաքելու, բայց կապվելով Ռուսաս-տանի բոլոր հայաբնակ քաղաք-ների հետ միջոց ունի ստորագրու-թիւն բաց անելու թէ Կովկասի և Անդրկովկասի և թէ եւրոպա-կան Ռուսաստանի քաղաքներում:

Մեր կարծիքով ոչ Թիֆլիսի մասնաժողովը կենտրոնական է, ոչ էլ Երևանինը, այլ երկուսն էլ հաւասար են՝ թէ իրանց իրա-ւունքների և թէ պարտաւորու-թիւնների կողմից:

Ռուսաստանը միշտ կը սպառնայ Բալկանեան թերակղզուն և Կ. Պոլսին, իսկ երկրորդը՝ Կով-կասը տիրապետելով, նա իր նուաճումները կարող է շարունակել Հայաստանի և Հնդկաս-տանի կողմերը: Խաղաղութիւնը Եւրոպայում, հեղինակի կարծիքով, կարող է լինել միայն այն ժամանակ, երբ Ռուսաստանից կը խլվին այդ երկու երկրները՝ Լեհաստանը և Կովկասը (ու-զում է ասել Անդրկովկասը):

Իսկ այդ տեսակ մտադրութիւն իրագործելու համար քաջ աւստրիացի մայորը հրաւիրում է ամբողջ Եւրոպային որ նա միանայ և Ռուսաս-տանին ասի՝ «կանգնիր»:

Այո, վերջացնում է հեղինակը, քանի որ Ռու-սաստանը իր ձեռքում կունենայ Կովկասը (Ան-դրկովկասը) և Լեհաստանի սահմանակից բեր-դերի շրջան, այդ պետութիւնը երբեք չի հրա-ժարվի իր աւանդական աշխարհակալութեան քաղաքականութենից և միշտ կը ներկայացնի մի սպառնալի փտանգ ազգերի և անախ պե-տութիւնների գոյութեան ճամբար:

Եւ այդ տեսակ երեւելի հետեւանք իր դատո-ղութիւններից դուրս բերելուց յետոյ, ուսում-նակալաւ սաստիկ մայորը առաջարկում է Եւրոպային մի տեսակ խաչակրաց պատերազմ Ռուսաստանի դէմ: Նա առաջարկում է որ ամ-բողջ Եւրոպան միանայ, միացնէ իր զօրքերը, և անգլիական նաւատորմի օգնութեամբ կատարէ իր վերե յիշված առաջարկութիւնը՝ խել Ռու-սաստանից Անդրկովկասը և Լեհաստանը, ի հարկէ, աւելացնում է հեղինակը, այդ տեսակ գործի աջողութիւնը կախված է բացի եւրոպա-կան զօրքերի և անգլիական նաւատորմի ոյժից, նոյնպէս և յիշեալ երկու երկրների ազգաբնա-կութեան դէպի Ռուսաստանը ունեցած արա-մադրութենից:

Ուրեմն հեղինակը շատ լաւ կանէր որ Ռու-սաստանին եւրոպական խաչակիրների պատե-րազմ յայտնելուց առաջ, հիմնաւոր կերպով ու-սումնասիրէր այն երկրների բնակիչների արա-մադրութիւնը, որ դիտաւորութիւն ունի խել Ռուսաստանից:

Թիֆլիսի մասնաժողովը. պատասխանատու է իր բոլոր նուիրատուների առջև, ուրեմն պետք է ամեն ամիս ձիշդ և մանրամասն հաշիւ տայ իր նուիրատուներին իր ծախսած իւրաքանչիւր կօպէկի մասին:

Լեթե Լըբանի մասնաժողովը. չլինելով Թիֆլիսի մասնաժողովը պարտաւոր կը լինէր իր ազնաներ ունենայ Լըբանեան նահանգում, — այժմ ազնաների տեղ նա ունի Լըբանում պատակաւ անձինքներից բաղկացած իրան հաւասար մի ընկեր մասնաժողով, ուրեմն փոխանակ ինքն իր հաւաքած գումարները ծախելու, կարող է կատարեալ հաւասարութեամբ յանձնել այդ գումարները Լըբանեան մասնաժողովին յօգուտ գաղթածների հարկաւոր ծախսեր անելու համար: Բայց այնու ամենայնիւ այդ ծախսերն էլ, ինչպէս ամեն հասարակական գումարների ծախսեր, պետք է լինի գիտակցական:

Հասարակական գործերի մէջ նախ և առաջ պահանջուած է գիտակցութիւն և ճշգրտութիւն: Թիֆլիսի մասնաժողովից անպատճառ հաշիւ կը պահանջեն թէ Թիֆլիսի և Թիս գրքի քաղաքների բազմաթիւ նուիրատուները, այդ պատճառով էլ թէ Թիֆլիսի մասնաժողովը կը տայ իր բոլոր փողերէն Լըբանի մասնաժողովին, նա նոյնպէս պետք է իմանայ ինչ բաների վրա է ծախսած իւրաքանչիւր գումարը, ուրեմն պետք է հաշիւ ասանայ Լըբանի մասնաժողովից, որպէս զի ինքն էլ իր կողմից կարողանայ հաշիւ տայ իր նուիրատուներին:

Լեթե ոչ հաշիւ տալը և նուիրատուների առջև պատասխանատու լինելը անհարկն կը լինի և ամեն ամիս Թիֆլիսի մասնաժողովի հաշեւում թիւնը կը բաղկանայ միայն հետեւեալ խօսքերից. ստացանք հաղար րուբլ, — ուղարկեցինք Լըբանի մասնաժողովին, ստացանք երեք հաղար րուբլ, — ուղարկեցինք Լըբանի մասնաժողովին, և այլն:

Թիֆլիսից կը նշանակէ նուիրատուներին հաշիւ տալը:

Գերից սկսեալ իր 17-ից: Երեկ, սկսեալ ըրի 16-ին Թիւրքերը նորից փորձեցին յարձակողական գիրք բռնել Առաւօտը ճակատամարտը սկսեցաւ ամբողջ գծի վրա: Կռիւր մանաւանդ շատ սաստիկ էր Չարուխի գիւղի դիմաց: Այդ գիւղը գտնուած է Երեւանեան նահանգում, Սուրմալուի գաւառում, սահմանից 25 վերստ հեռու, Արաքսի աջ ափի վրա, Եգիպտոսի գէպի հիւսիս-արեւմուտք: Ճակատամարտը շարունակեց մինչև գիշերը: Թշնամին ամեն տեղ յետ մղեցաւ ռուս զօրքերից, և մեր զօրքերը հետեւեալով Թիւրքերին, վեր առան մի շարքը ամրացած մարտկոցների: Մեր կողմից կորուստը հասնում է մինչև 180 սպանված և վերաւորված սուղ զաւակներ: Օֆիցերների կորուստի մասին գետ յայտնի էլ է — «Кавказ» լրագրին հետագրում են: Սկսեալների 15-ին Տէր-Ղուկասովի զօրքի Իգնիլով-Փաշայի զօրքի հետ ունեցած ճակատամարտի ժամանակ ռուսաց զօրքը յետ մղելով Թիւրքերին, հետեւեց նրանց եօթ վերստի տարածութեամբ: Բոլոր դիւրքերի վրա թշնամին յետ մղեցաւ: Մեր կողմից թիւթե կերպով վերաւորված են գինեղաւ Գէվէլ և գնդապետ Կաբէնին: Թշնամու կորուստները մեծ են: Մեզ մօտ վերաւորված են բացի Գէվէլից և Կաբէնից, դարձեալ 10 օֆիցերներ: Սուրմալուից սպանված են 16 հոգի և վերաւորված են 148 հոգի:

ԱՌԹԱՅԻՆ ՏԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Սկսած ամենապայքանի ազգերից, մինչև ամենալուսաւորեալները ամեն ազգերը պարտաւոր են կաթնային տնտեսութեամբ: Բայց նայելով այդ ազգերի լուսաւորութեան և զարգացման աստիճանին, այնպէս էլ քաղաքները և օրուտ համեմատաբար, առաջնները ոչ այնքան, իսկ երկրորդները — աւելի — և քրոպայի մէջ շատ ազգեր են տեսնում որոնք մեծ արդիւնք ունեն կաթնային տնտեսութեանց, ինչպէս հօլանդացիներ, շվեդացիներ, բելգիացիներ և այլն: Եւրօպական ազգերը ի հարկէ ընդունելով կաթնային տնտեսութիւնը իրանց արդիւնաբեր պարագամունքներից մէկը աշխատում են առաջ տանել կատարելագործել իսկ ասիական ազգերը ընդունում են միայն անդաւան պիտոյք և չեն նայում լայն շրջանից իրեն մի արդիւնաբեր պարագամունք, որով կարելի էր նիւթական միջոց ապահովել և հարստանալ: Կաթնային տնտեսութիւնը բաւը մեզ յոյց է ապաւն, որ այդ պարագամունքի համար հարկաւոր է կաթը և թէ ինչպէս պէտք է վարվել կաթի հետ, որ արդիւնաբեր լինի: — Ուստի վերոյիշեալ պարագամունքը իրագործելու համար հարկաւոր է ունենալ կաթնատու կենդանիները ընտիր ցեղերից:

Մեզանում ոչ մի ուշադրութիւն չեն դարձնում կենդանիների ընտրութեան վրա, ինչպէս և իցէ ցեղ լինի, սկսում են բազմացնել իսկ Եւրօպայի մէջ, — բազմացնում են մի միայն ընտիր ցեղերը: — Ընտիր ցեղեր ասելով մենք չը պէտք է հասկանաք կաթնատու կենդանիների հասակի մեծութեան կամ փոքրութեան նայելով, այլ նոյն առած կաթի քանակութեան վրա, այսինքն — շատութեան և քիւթեան:

Փողնելով մի կողմ Եւրօպական ազգերը, որոնցից մենք պէտք է աշխատենք օրինակ առնել, օգուտ քաղել նոյն ամենաօգտակար փորձերից, խօսենք Կովկասեան ազգերի կաթնային տնտեսութեամբ պարագաւոր ձեւերի մասին: Կովկասի լեռնաշխարհները, ինչպէս այն կիսալայնի ազգերը, որոնք երկար դարեր ապրում են սարերի զանազան ստորոտներում, վաղուց է պարագաւոր էին և պարագաւոր են ներկայումս կաթնային տնտեսութեամբ, բայց մինչև ներկայ տարիները

իրանց պարագամունքի մէջ ոչ մի փոփոխութիւն չեն արել, այնպէս են ընթացել և ընթանում են, ինչպէս քան տարի առաջ իրանց պարագաւոր ընթանում էին կաթնային տնտեսութեան վերաբերութեամբ:

Որովհետեւ ես ապրում եմ Վրաստանի մէջ և ունեմ ինձ հարեան օսերը, մի քանի խօսք կամենում եմ ասել թէ այստեղ ինչպէս են շինում պանիրը և իւրը: Չը նայելով որ օսերը կիսալայնի ազգ են, ապրում են Կովկասեան շրջային ստորոտում, ցրված ընդարձակ և մանր գիւղերի մէջ, այնու ամենայնիւ մեծ ընդունակութիւն ունեն առհասարակ տնտեսականութեան, բայց մանաւանդ կաթնային տնտեսութեան մէջ: Մի քանի գիւղեր, ինչպէս Չաղա և այլն, պանիրը և իւրը շինելու մէջ ստոր չէ կարելի դասել Եւրօպացիներից: Եւ չը կարծէք թէ ասում եմ քանակութեան, շատութեան վերաբերութեամբ, — այլ լուսութեան:

Պանիրը շինում են այս ձեւով: Նախ՝ վերցնում են պանրի մայր (այս է օշխարի, այծի և կամ կովի փոքր ստամոքս, որ կապած է մեծ ստամոքսի վրա և աղեղնաձեւ է), դրում են քացախի կամ շերով կառնած ջրի մէջ (աւելի շեր խառնած ջրի մէջ են դրում, որովհետեւ քացախ չեն ունենում), յետոյ տակաւնում դարձում են կաթը կրակի մօտ, երբ փոքր ինչ տաքանում է, այն ժամանակ շերի մէջ դրած մայրը և շերի ջուրը ածում են կաթի մէջ, փոքր ժամանակից յետոյ պանրի մայրը հանում են, խառնում են կաթը և շերոտ ջուրը միասին: Կարծես կաթի հիւլէները միանում են, իսկ կաթի ջրային մասը դարձեալ մնում է ջուր: մի օրից յետոյ միացած կաթը դնում են փայտեայ ամանների մէջ և քամում են ջուրը: Կանխը դառնում է անալի և ստանում է ամանի ձեւը, յետոյ աղ են ածում և մի շաբաթից յետոյ ածում են աղի ջրի մէջ: Իւրը շինում են հետեւեալ կերպով: Հաւաքում են մի շաբաթ ամանների մէջ մաճուն և յետոյ ածում են խնցուղ մէջ, որը կիսած է լինում տան առաստաղից չուաններով, խնցուղն ինքն լինում է գլանաձեւ, կրկու արշին երկարութեամբ, ունենում է գէպի առաստաղ դարձած կողմից կօշը բերան, այնպէս որ կարելի է կարգ հանել բերանը ծածկում են և սկսում են ձոնել: ձոնելուց մաճունը դառնում է թիւթ կաթ, իսկ կաղնից փոք կարագը թիւթ կաթի մէջ բռնած տեղից թիւթ և լինելով դուրս է գալիս խնցուղ բերանից, և նրան սկսում են հաւաքել: Մի խօսքով այս գործողութիւնը շարունակվում է մինչև այն ժամանակ, երբ թիւթ կաթի մէջ իւրային մասը հասնում է հասնելուց յետոյ դուրս են ածում թիւթ կաթը և բաժանում են հարեաններին:

Յիսնվալ Բ. Տէր-Արքայանեանի

ՆԱՄԱԿ ԽԱՐԿՈՎՅՈՒՅ

Սկսեալների 8-ին

Յուլի ամսին օծեցին այստեղ խարկովի երկաթուղու ուսնի տարներին (առողջապահական) գնացքը՝ որ կազմված է Կ. Ս. Պ. Պոլեակովի նուիրած գումարով: Թէ այս գնացքը պատրաստելու և թէ օծման ժամանակ մեծ հողացողութիւն կրեց տեղւոյն երկաթուղու կառավարչի օգնական, ճարտարապետ պ. Վ. Գ. Խրեշիլով: Այս սանիտարների գնացքը ութերորդն է Ռուսաստանում և սորա մէջ ըստ կարողութեան լցուցին բոլոր այն պակասութիւնները որ տեսնված էին և զգում էին մինչև այժմ միացեալ սանիտարների գնացքների վերաբերութեամբ: Ամեն բան յարմարեցրած է և չինած բոսնիական զուլթեան տեղութեան, գիտականների և երեւելի բժիշկների: Ամբողջ սանիտարների գնացքը բաղկացած է 26 վագօնից, որոնցից 17 նշանակված են միայն հիւանդների և վերաւորեալների համար, իսկ 9 ծառայողների և տնտեսա-

կան պիտոյքների համար: Հիւանդների վագօնները յարմարեցրած են պատկել և նստել կարող հիւանդների համար: Պատկել հիւանդների վագօնների մէջ չինված են պ. Գորոզեցիու սիւտեմայով անկողիններ, դռներ բաւականին լայն են՝ այնպէս որ հեշտութեամբ կարող են ներս տանել և դուրս բերել ամենազգուար հիւանդներին, իսկ միւս վագօնները յարմարեցրած են նստել կարող հիւանդների համար: Այս վերջիններում զգված են բացվող բաղկաթնուներ եռաժառ մահիճներով, այնպէս որ հարկաւոր եղած ժամանակ կարելի է անկողին դարձնել: Օրը միշտ մաքուր լինելու համար պատահաններ շատ յարմարեցրած են: Բոլոր վագօնները միացած են հեռագրով, նմանապէս և բոլոր վագօնները ունեն առաստաղեմար պահարաններ լուացքի համար և ամանների համար, կան և սեղաններ՝ որ կարելի է բարձրացնել ըստ հարկաւորութեան և ցածրացնել, լուացարաններ, ջրամաններ, լուացք և զանազան հարկաւոր պիտոյքներ: Վագօնները միացած են մեծ գոգնութեամբ և մէկ վագօնից միւսը անցնելու ճանապարհներ փոխած են պատասաղով:

Այժմ յիշենք բոլոր վագօնները կարգով: Առաջին երեք վագօններում յարմարեցրած են՝ մէկի մէջ մառանը պաշարները պահելու համար, պահարաններով հանդերձ և սառցամանով. երկրորդի մէջ՝ խոհանոցը եւրօպական ձեւով, ջրամանով, որտեղ ջուրը լցվում է առանձին միջնային միջոցով, սեղաններով և պահարաններով: Երրորդ վագօնի մէջ է սեղանատուը հանդերձ խոհանոցի դարանով (буфетъ), սեղանի հարկաւոր ամաններով և լուացքով: Այս վագօնի մէջ է և գրադարանը ծառայողների և հիւանդների համար: Այս վագօնների կից են հիւանդների 9 վագօններ և յետոյ երկու վագօն ծառայողների համար, մինչև իրական և միւսն արտական սեռի համար: Սորանից յետոյ գալիս է գեղազորական (аптечный) վագօնը՝ որտեղ մէկ կէտում յայտարարեցրած է գեղազորականները բոլոր հարկաւոր գեղերով և պարագաներով, իսկ միւս կէտում առանձին խոցեր քահանայի, տնտեսի, համալսարանի ուսանողների և բժիշկների օգնականների համար: Գեղազորական վագօնից յետոյ նշանակված է կառավարչական վագօն առաջին դասի, որի մէջ են բնակարանները խարկովի «կարմիր խաչի» ընկերութեան ներկայացուցչի, բժիշկապետի, նորա երկու օգնականների և կօմիսարների, վերջապէս գալիս են դարձեալ հիւանդների 8 վագօններ և ապրանքի երկու վագօն, որոնցից մինը նշանակված է զանազան պաշարների և գնացքի վերաբերեալ պիտոյքների համար, իսկ միւսը ծառայողներին պատկանեալ բաների համար: Այս սանիտարական գնացքի մէջ յարմարեցրած է և պ. Դատովի նոր հնարած գործիքը (տես. Ներքին լուրեր), որով հարկաւոր եղած ժամանակ կարելի է գնացքը կանգնեցնել տալ իմացնելով հեռագրի արագութեամբ մեքենայակերտ: Վանիտարների գնացքը յուլիսի 14-ին մեծ ճանդիւղով ճանապարհ ելաւ գէպի վաղեմակալ հիւանդների և վերաւորեալների ընդունելու՝ որտեղ հասաւ նոյն ամսի 19-ին և այնտեղից հասցրեց նշանակեալ քանակութեամբ հիւանդներ և վերաւորեալներ: Բոստովի հիւանդանոցը: Այնտեղից վերադարձաւ դարձեալ վաղեմակալ և նորից հիւանդներ հասցրեց Վանաւա քաղաքի հիւանդանոցը: Իսկ այժմ այս գնացքը գտնվում է խարկովում և պատրաստվում նորից երկար ճանապարհորդութեան:

Ա. Մեղրուման

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՅ

Սկսեալների 3-ին

Գուցէ ոչ մի ժամանակ հայերէն լրագիրը այնքան համակրողներ և հետաքրքիր ընթերցողներ չէ ունեցել Բագուի մէջ, որքան այժմ. և սորա պատճառը պատերազմն է և տաճկանայոց խնդիրը: Փօստը եկած չեկած՝ հետաքրքիրները հաւաքվում են փոստի վարչութիւնը («Մշակ» ստանալու, իսկ ոմանք մինչև անգամ ուրիշի համար վերցնում են այնտեղից, կարող են յետոյ իր տիրոջ հասցնում «Մշակ»՝ այստեղ մեծ համակրութիւն է գտած մինչև անգամ այն պարանները: Կողմից, որոնք ուրիշների կարծիքն մեքենայաբար հետեւելով կամ միւս լրագիրը աւելի ծանրաբան և հեռատես համարելով՝ առաջ հաւատակ էին խօսում նորան: և առհասարակ հայերէն լրագիր ասելով ընթերցողը հասարա-

ՆԵՐՔԻՆ ՏԵՏՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԻՏ

«Тифл. Вестн.» լրագրի մասնաւոր թղթակիցը հետեւեալ հեռագիր է ուղարկում Իդ-

Մեզ խնդրում են յայտնել որ՝ գաղթականներին համար հինված ԹԻՖԼԻՍԻ հոգատար Մասնա-
ժողովը բացի փողից՝ ընդունում է նուեքներ
չորերի, ճերմակեղէնի, կոչիկների, զուլպաների և
այլ այդ տեսակ, զլխաորապէս ձմեռայն հագուս-
տի վերաբերեալ իրեղէնների ձեռք Այդ բոլորը
ընդունվում է նախկին Իվանովի ընթերցարա-
նում, Արծրունու տանը, Մասնաժողովի անդամ
Կ. Աբգար Յովհաննիսեանցի մօտ, որտեղ նուե-
րատուները կը ստանան ստացականներ իրանց
նուեիրած իրեղէնների համար, իսկ իրանք իրե-
ղէնները կը դարձան նոյն տանը գտնվող, տա-
նիրով, գեներալ Արծրունուց Մասնաժողովին
ձրիապէս տուած ժամանակաւոր պահեստի մէջ

Մենք լուում ենք որ պ. Անանովի ծախսով
ԹԻՖԼԻՍՈՒՄ հիմնված հայ օրիորդաց ուսումնա-
րարանը շուտով բացվելու է: Լուում ենք որ ու-
սումնարանի տեսուչ բարեբարների ընտրու-
թեամբ նշանակվել է պ. Յ. Չիգինեան, որ ու-
սում է առև Վերսիլիայում էֆֆանդեանցի հաշ-
ուով, յետոյ երկար ժամանակ վարձակառության
է արել Մօզզովում, յետոյ Կ. Պօլսի մէջ եղել է
վարժապետ և մինչև անգամ Նուբար-Շահնազա-
րեանի ուսումնարանի տեսուչ է եղել, վերջա-
պէս և Թիֆլիսի Մարիամեան օրիորդաց դպրոցի
մէջ ուսուցչութիւն և տեսչութիւն է արել: Մենք
կարծում ենք որ ուսումնարանի հիմնողները ա-
ւելի ամուլ և յարմար ընտրութիւն էին իր կարող
անել:

ԹԻՖԼԻՍԻ Կոթաշէնի Ս. Մարիամեան
օրիորդական ուսումնարանի վարչութիւնը պա-
տիւ ունի յայտնելու, որ բացի դասական դրագ-
մուսքներէր, սեպտեմբեր ամսից սկսած տրլում
են և մասնաւորապէս կարու ձեռի դա-
սեր մի հմուտ մասնագէտ տիկնոջ առաջնոր-
դութեամբ: Յանկացողները մանրամասն տեղե-
կութիւններ կարող են ստանալ ուսումնարանի
տեսչից: Պարագմուսքները լինում են ձախց
յետոյ:

Արևի ռուհեցանք այս օրերս կրկին այցելելի
 Թեյնիկ ԽՍՀ Խոտալահան օպերա, Երեկայ գանդե-
 ցանք (Պոստիսանի) Բեյլինի օպերային: Շատ
 ճիշդ է ասված որ մի գործը բոլոր դրվանները
 միշտ քիչ թե շատ նման են միմեանք, ինչպես
 մի հոր հարազատ երեխաները միմեանք նման
 են լինում: Մարդը, որ լսել է «Լուսնահար
 հարս» օպերա, ակամայ ճանաչում է «Պոստի-
 տանի» օպերայի մեջ մի ե նոյն մօտյնները:
 Չենք կարող ասել որ անաջող տպաւորութիւն
 դուրս բերած լինէինք օպերայի ամբողջութե-
 նից: Ճիկին (կամ օրիորդ) Գարգանս, երկրորդ
 պրիմադօնա սօպրանո, դուբեկան, շնոր-
 հալի ե մշակված ձայնով երգումէին: Պ. Մա-
 նուկը, թէէն վերին ստաթիմիկ դուբեկան ձայն
 ունէր, քայց թող ներվի մեզ ասել որ թատրոնի
 կապալաւուտ պարոնները իդուր են կարծում, որ

Հասարակութիւնը չի նկատի որ նա ամենեւեւ
բաց է, այլ բաական խոր բարի տօն է
խիղ նա, որին մեզ ուզում են բարխօնի տե-
նութեան հետք տալ, պ. Ջիւ տօնի, նա զգալի
պէս բարխօնի տօնի ձեւով ձեւով: Այստեղ են
մի ուրիշ բարխօնի շնորհակալութիւն է:

Մ. ԲՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ.

Այս րազելիս ֆրանսիայում ուրիշ բանի վրա
չէն խօսում, եթէ ոչ հանրապետութեան
նախագահ, մարշալ Մակ-Մաճօնի մանի-
ֆէստի վրա դեպի ֆրանսիական ազգը: Մար-
շալը այդ մանիֆէստի մէջ սատարի շատ խո-
սում է իր անձի մասին, գովում է իր գը-
րութիւնը, հաւատացնում է որ բոլոր բարեկա-
րութիւնները, վերանորոգութիւնները 1870
—1871 թւերի աւերոյ պատերազմից յե-
տոյ նա է արել, նա է մտքի վարդ, հան-
գատութիւն ու երջանկութիւն ֆրանսիայում:
Նա իր ամբողջ մանիֆէստի մէջ ամեն տողի
վրա քսան անգամ գոնէ կրկնում է ես խօսքը:

Այն բոլոր բարեկարգութիւնները, որոնց մերջալը իրան է վերաբերում, նրանք կատարվեցան իսկապէս հանգուցեայ Թիէրի ձևով: Իր մանկ՛հետի վերջում, իր անձինքի անշափ շատ խտեղուց յետոյ, Մակ-Սահուն գլուխացնում է Ֆրանսիացիներին ընթերցել այնպիսի պատգամաւորներին, ինչպիսիները ընտրված են պատգամաւորների անցեալ ժողովէ մէջ, և աշխատում ե հաստատեն որ նախկին ազգային ժողովը հաստատման ազգային էր և նա ստիպվեցաւ արձակել այդ ժողովը որովհետեւ Ֆրանսական սահմանադրութեանը վտանգ էր սպառնում:

Վերնապէս, կարճ ասեմք, ամբողջ մանի-
ֆէստը լի է ամենախորը ստույթիւններով
իւր արդէն ապացոյց է մի տելութեան
թուլութեան, երբ նա զործ է տօմում ստու-
թիւնը որպէս վերջին միջոց եւ հասարակա-
ւան ազնիւ գործողների մասին ամենակարգիտ
ամբասանք եւ զգալարուութիւն անտում, որով-
հետեւ այդ գործողները հակառակ կուտակ-
ութեան են պատկանում:

Բայց այնու ամենայնիւ Մակ-Մահօնին մը-
տում է միայն երկու ելք՝ կամ համբերել որ
աշու ազգային ժողովի համար կրկին ընտրվի
հանրապետական պատասխանատւորների բազմու-

Թիւնը, կամ Նապօլէոն III-ի օրինակին հետեւել և նրա գործած յանցանքի պէս մի յանցանք գործել, այն է կատարել մի պետական հարուած:

Ինչ և իցէ, պէտք է խոստովանվել, որ Մակ-Մահճնի մանիֆէստը այնքան վատ է անշնորհ կերպով է գրած, այնքան վախկոտ և դաւաճան ոգի է շնչում գրվածքի իւրաքանչիւր տողից, այնքան սպիտակ թելով է կարած այդ մանիֆէստը, այնքան անշնորհ կերպով են հնարված ստույթիւնները, որ փոխանակ աւելի նշանակութիւն ստանալու Փրանսիական հասարակական կարծիքի մէջ, մարշալը իր այդ գրվածքով կարող է կորցնել իր ունեցած հեղինակութեան վերջին նշոյլներն էլ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— ԼՂ. Պլոսի հայոց ազգային ժողովը նորեւումն ներկայացրեց սուլթանին շնորհակալութեան աղբիւր Սուլթանից Ներսէս պատրիարքին Ստանիք պատանշանը շնորհելու պատճառով :

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

„ՄՁԱԿԻ“ Համագրատան
մեջ ծախվում է տպերու թՈՒՂԹ-
էժանն գնով: Տեսնել կարելի է ա-
մեն օր առաւօտները, մինչև 12
ժամ կէսօրի:

Въ редакціи «МШАКЪ» по случаю продается дешево комментарная бумага. 5—5

ՀԱՅԵՐԻՆ Լեւոն դասեր
[Թէ աշխարհաբար և [Թէ գրա-
բար: Հասցէն «ՄՇԼԿԻ» խմբա-
գրատանը:

Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Դեյվիդ Մեյժորը հայտարարեց, որ Մեծ Բրիտանիան պատրաստ է ընդունել Եվրոպական խորհրդի որոշումը՝ ընդհանուր առմամբ ընդունելով Եվրոպական խորհրդի կողմից ընդունված 10 ժամանակ մինչև 4 ժամ, կարճելը և խոսելու ամեն լեզուներով:

— Լրագիրները հաղորդում են որ չէրնօքօր-
ցիները մօտեցան Գաչիօ բերդին:

— Վճռողնից հեռագրում են որ սեպտեմբերի 15-ին Ղլաղատոն մի ճառ ասեց Նոտինգհամի մէջ արեւելեան խնդրի առթիով, որտեղ յայտնեց իր համոզմունքը թէ պատերազմը ծագեց անգլիական տէրութեան անորոշ քաղաքականութեան պատճառով, որ պէտք է միանալ միացած պետութիւնների հետ և նրանց հետ միասին խառնելը ջրխառնանքին պաշտպանելու գործի մէջ: Ղլաղատոն յայտնեց պահանջը որ խաղաղութիւնը հաւաքել և հասցնել ճիշդ տեղեղութիւններ թիւրքերի ձեռքում գտնվող առև գերիների մասին:

— «(ՊՈԼՈՑԻ)» Լրագրին հաղորդում են որ Կու-
նյակի առևտ գործերն մի սուլալան գերի ընկնելով
Թիվրգազ գործի ձեռքը, կարողացաւ փախել
գերութենէն և պատմեց իր բանալովւմ նախ-
ստիպել բանին, Նրաք հինգ թէ վեց մարդ
ընկան Թիվրքերի ձեռքը, Թիվրգազ կահուստւոր
գործի կապահանքին տկլորացրին նրանց ամեն-
քին, Կապահանք ծառերի մօտ և մի ուռնաւոր-օֆի-
կոսին սկսեցին կենդանի մարմինը՝ առավ ձեռ-
քերը, յետոյ ոտները կաշին քերթել, վերջա-
պէս գլխիցն ամրոջը մարմնից կաշին և մարդը
մեռաւ անասելի տանջանքների մէջ։ Մէկի հետ
վերջացանց յետոյ, հերթը հասնում էր միւս-
ին։ Մէկը միայն կարողացաւ հասնաւոր փախել,
և թէն նրա վրա չհասանաւոր արձակեցին, լսայց
չը կարողացան բռնել։ Ահա ուրեմն սա ձեռ-
նա գր ա կ ա ն պետութեան կանոնաւոր գործը։

Նախկին Խժնոցի ընթերցարանում ծախ-
վելու են այսուհետև ամենատեսակ հայերէն
գրքեր:

Պ. ս. Հեղինակները, հրատարակիչները և
գրավաճառները կարող են ուղարկել իրանց գրու-
թերը կոմիտայով ծախելու:

Յանկայտոյք կարող են անձամբ կամ զրաւոր
տեղեկանալ ընթերցարանի վարչութեան մօտ:
Հասցեն Թիֆլիս նախկին Իվանօվի ընթեր-

Въ Тифлисѣ въ библіотеку бывшая Иванова, Перчу
Прощанцъ. 1—3

ԱՇԽԱՏԱՆԱԲԱՐ Հայոց կենդանի լե-
զուի ԳԱՍԵՐ և ԽՕՍԱԿՑՈՒԻԻՆՆԵՐ:
Հարցնել «ԱՇԽԱ» լրագրի խմբագրա-
տանը: 5-10

Шоринъ на углу Кузнецкаго моста и Петровки, домъ Шориной, входъ съ Петровки, противъ гостин. Франція.

մեղսագրության ատամնա-
մեղսագրության

10—25 (1)

[illegible]